ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» մայիսի 2022 թվականի N 06-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ և 6.1-ին կետերը, 11-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը որոշում է.

1. «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի օգոստոսի 29-ի N 04 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի որոշման նախագիծը վերադարձնել լրամշակման՝ սահմանել միայն «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1000-Ն որոշմամբ սահմանված լիազորող նորմերի շրջանակներին համապատասխանող կարգավորումները և լրամշակված նախագիծը ներկայացնել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամներին կարծիքի:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Ա. Ասոյանին՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամ Հ. Պողոսյանի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա քննարկել «Տեսչական մարմինների մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության հարցը և նման անհրաժեշտությունը հիմնավոր համարվելու դեպքում ապահովել հետագա ընթացքը:

3. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվությունը:

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

5. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հ. Ավագյանին՝ ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվությամբ արձանագրված խնդիրները և ապահովել արձանագրված խնդիրների բացառման գործընթացը:

6. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու հարցը հավանություն արժանացնելու նպատակով անցկացնել էլեկտրոնային քվեարկություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804 **Ն. ՄԿՐՏՉՅԱՆ**